ԿԱՐԵՆ ՓԱՎԼԵՄԱՆՅԱՆ

ՀԱՅ ՍՊԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԳԱԼԻՑՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Առաջին աշխարհամարտի սկզբնական ռազմական գործողությունները ծավալվեցին Եւրոպայի արեւմուտքում, որտեղ Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիան պատերազմի հենց առաջին օրերից հայտնվել էր ծանր իրավիճակում: Ֆրանսիայից ստացված ամենօրյա հաղորդագրությունները հորդորում էին Ռուսաստանին որպեսզի վերջինս Եւրոպայի արեւելյան հատվածում սկսի ռազմական գործողություններ:

1914թ. օգոստոսի 1 (14)-ին Գլխավոր շտաբի պետ Ն. Ն. Յանուշկեւիչը հեռագրեց Հարավարեւմտյան ճակատի հրամանատար Ն. Ի. Իվանովին այն մասին, որ Ֆրանսիան խնդրել է «օգնել իրեն հարձակմամբ ոչ միայն Հյուսիսարեւմտյան ճակատի բանակներով, այլեւ Հարավարեւմտյանով»[1]: Ֆրանսիայի ծանր իրավիճակում գտնվելու մասին էին վկայում նաեւ Փարիզում Ռուսաստանի ռազմական կցորդ Ա.Ա. Իգնատեւի այդ օրերի զեկույցները, որոնցից մեկով նա հաղորդում էր. «... գերմանական բանակի ձախ թեւը առանց խոչընդոտների շարժվում է դեպի Փարիզ: Իմ կարծիքով գերմանացիների մուտքը Փարիզ արդեն օրերի հարց է»[2]:

Հետագայում կհիշատակվի, որ այս օրերին ֆրանսիական զինուժի կորուստներն այնքան շատ էին, որ միայն ֆրանսիական սպայական կորպուսի 10 տոկոսը դադարեց գոյություն ունենալ[3]:

Դաշնակցային պարտավորությունները կատարելու նպատակով Ռուսաստանը Եւրոպայի արեւելյան հատվածում բացեց միանգամից երկու ճակատ, որոնք միասին հայտնի են Արեւելյան կամ Ռուսական ռազմաճակատ անվանումով:

Ռուսական ռազմաճակատի հյուսիսարեւմտյան հատվածում ռազմական գործողությունների սկիզբը ազդարարվեց օգոստոսի 4 (17)-ին Արեւելապրուսական ռազմական գործողությամբ, իսկ հարավարեւմտյան հատվածում ռազմական գործողությունների սկիզբը ազդարարվեց օգոստոսի 5 (18)-ին Գալիցյան ռազմական գործողություններով: Վերջինիս գլխավոր իրադարձություններն էին Լյուբլին-Խոլմյան, Գալիչ-Լվովյան գործողությունները, ինչպես նաեւ Հարավարեւմտյան ճակատի հակահարձակումը եւ ընդհանուր հարձակումը: Այս գործողությունների ամբողջ ժամանակահատվածում իրենց օրինակելի եւ անձնվեր ծառայություններով աչքի ընկան բազմաթիվ հայազգի զինվորականներ[4]:

---

1 РГВИА, ф. 2067, g. 1, q. 147, էջ 3:

2 **А. А. Игнатьев**, 50 лет в строю, Петрозаводск, 1964, с.44.

3 Տե՛ս **Дж. Террейн**, Великая война.Первая мировая – предпосылки и развитие, Москва, 2004, էջ 38:

4 Առաջին համաշխարհային պատերազմում հայազգի զինվորների մարտական առօրյայի լուսաբանման համար կարեւոր աղբյուրագիտական հիմք են հայազգի մի շարք հոգեւորականների առանձին հրապարակումներ, որոնք տպագրվել են պատերազմի տարիներին: Պատերազմի սկսվելուն պես բանակային շրջաններում ստեղծվել էին հատուկ պաշտոններ հոգեւորականների համար, որոնք լինում էին եւ՛ դիրքերում, եւ՛ հիվանդանոցներում, եւ՛ շտաբում (”Вопросы Истории“, N10, октябрь, 1990г., с.162, **А. С. Сенин**, Армейское духовенство

Ռուսաստանը Հարավարեւմտյան ճակատում Ավստրոհունգարիայի դեմ կենտրոնացրեց ռուսական 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 8-րդ բանակները, որոնց դիմաց Սանդոմիրից մինչեւ Չերնովից (390-400 կմ ձգվածությամբ) Ավստրոհունգարիան կենտրոնացրեց իր 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ բանակները եւ Վորշի կորպուսը:

1914թ. օգոստոսի 7 (20)-ին ավստրոհունգարական 1-ին բանակը Սան գետի հովտից շարժվեց դեպի հյուսիսարեւելք: Այս բանակի խնդիրն էր Տանեյան անտառային շրջանում տեղակայումը, որը շատ նպաստավոր դիրք էր ծառայելու հետագա գործողությունների համար: Ռուսական հրամանատարությունը, իր հերթին օգոստոսի 10 (23)-ին Լյուբլինից հարավարեւմտյան ուղղությամբ ուղարկեց ռուսական 4-րդ բանակը, որը պետք է ջախջախեր հակառակորդին եւ շարժվեր դեպի Պերեմիշլ: Կողմերի փոխադարձ առաջխաղացումը հանգեցրեց թեժ, դիմահար ճակատամարտի, որը ծավալվեց օգոստոսի 10 (23)-ից 11 (24)-ը Կրասնիկի շրջանում: Այստեղ ծավալված մարտերում աչքի ընկավ ռուսական 4-րդ բանակի 14-րդ բանակային կորպուսը[5], որի հրետանային տեսուչն էր գեներալ-լեյտենանտ Արտեմի Սողոմոնի Վարտանովը[6]: Բացի նրանից, որ հայազգի գեներալը կորպուսի հրետանու նյութատեխնիկական պատշաճ մակարդակի համալրվածության, մարտունակության, ինչպես նաեւ անձնակազմի բարձր հրետանային գիտելիքների ուսուցման պատասխանատուն էր, միեւնույն ժամանակ իր տրամադրության տակ ուներ որոշակի քանակությամբ զորք[7], որի գլուխ կանգնած մի շարք մարտերում հաղթանակներ տոնեց: Կրասնիկի համար մղված մարտերում նա իրեն դրսեւորեց որպես համարձակ, նախաձեռնող, արագ կողմնորոշվող, ճշգրիտ հաշվարկներ իրականացնող եւ մեծ կամքի տեր զորավար:

Կրասնիկի շրջանում երկօրյա փոփոխական հաջողություններով ուղեկցված ծանր մարտերից հետո ռուսական ուժերը հեռացան եւ օգոստոսի 12 (25)-ին խմբավորվեցին Լյուբլինից 20-45 կմ դեպի հարավ եւ հարավարեւմուտք: Այնուամենայնիվ, Կրասնիկի շրջանի մարտական գործողությունները ստիպեցին լրացուցիչ ճշգրտումներ կատարել հրամանատարության որոշումների մեջ:

Նոր ծրագրերի պատշաճ իրականացման համար ռուսական Գլխավոր հրամանատարությունը մի շարք միջոցներ ձեռնարկեց Հարավարեւմտյան ճակատի աջ թեւի ամրացման համար: Այստեղ ուղարկվեցին Վարշավյան խմբավորման 18-րդ բանակային, Գվարդիա-

---

России в первую мировую войну): Հայ հոգեւորականները, զրուցելով հայ զինվորականության հետ, այցելելով հոսպիտալներում բուժվող վիրավոր հայ զինվորներին, հավաքում էին մի շարք արժեքավոր փվյալներ եւ զետեղում էին հայալեզու մամուլում: Խոսքը հատկապես վերաբերում է 1914-1918թթ. Թիֆլիսում տպագրվող «Մշակ» թերթին, որը Կյուրեղ ս. Աբգարյանի, Արսեն թ. Սիմոնյանի, Խորեն թ. Մնացականյանի շնորհիվ ի ցույց էր դնում հայազգի զորայինների կատարած քաջագործություններն ու սխրանքները, Գեորգիեյան շքանշանի հայազգի ասպետներից ոմանց անցած մարտական ուղին, վիրավորների եւ զոհերի անունները:

5 Պատերազմի նախօրեին այդ կորպուսը համարվում էր ամենաուժեղներից մեկը եւ այն իր կազմում ուներ 1 հետեւակային դիվիզիա, 2 հրաձգային բրիգադ, 2 հեծելազորային դիվիզիա: Տե՛ս **Д. Баланинъ**, На боевыхъ поляхъ, “Военный сборникъ”, N 1, январь, 1917, էջ 43:

6 Արտեմի Վարտանովը ծնվել է 1855 թ. փետրվարի 15-ին Թիֆլիսում: Կրթություն է ստացել տեղի ռեալական ուսումնարանում, Միխայլովյան հրետանային ուսումնարանում, Միխայլովյան ակադեմիայում եւ այլն: 1872թ. օգոստոսի 28-ից զինվորական ծառայության մեջ էր, 1912թ. դեկտեմբերի 6-ին ստացել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում: Մինչեւ առաջին աշխարհամարտի սկիզբը, Ռուսաստանի զինված ուժերում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, արժանացել է բազմաթիվ շքանշանների եւ պարգեւների: Տե՛ս РГВИА, ф. 409, g. 1, գ. 175249, էջ 13-20:

7 Տե՛ս **Е. З. Барсуков**, Артиллерия русской армии (1900-1917.), т.1, Москва, 1948, էջ 15:

կան եւ Կովկասյան կորպուսները, ինչպես նաեւ 80-րդ, 82-րդ եւ 83-րդ դիվիզիաները, որոնց առջեւ խնդիր դրվեց՝ «ինչ ուզում է լինել, խոչընդոտել ռուսական 4-րդ բանակի աջ թեւի վրա ուղղված ավստրիացիների շրջանցիկ շարժմանը»[8]:

Հարավարեւմտյան ճակատի աջ թեւում շարունակվում էր Լյուբլին-Խոլմյան օպերացիան: Ավստրոհունգարական հրամանատարությունը ձգտում էր աշխուժացնել հարձակումը Լյուբլինի ուղղությամբ, որի արդյունքում ռուսական 4-րդ բանակը հայտնվելու էր ավստրոհունգարական 1-ին բանակի «ձեռքում»: Սակայն ռուսական զորամիավորումների եւ հատկապես 18-րդ բանակային կորպուսի շնորհիվ ավստրո-հունգարական ուժերը ոչ մի լուրջ հաջողություն չունեցան: Ընդհակառակը, Լյուբլինի շրջանում ծավալված մարտերում ռուսական զինուժը առանձին դրվագներում զգալի հաջողությունների հասավ: Այստեղ ծավալված մարտերում դարձյալ աչքի ընկան բազմաթիվ հայ զինվորականներ: Բերնա գյուղից (Կարս) զորակոչված Մարկոս Տեր-Կարապետյանը, որը եւս մեկ զինվորի հետ դիրքերից դուրս փոխհրաձգության մեջ մտավ թշնամու 2 զինվորների հետ եւ փախուստի մատնեց վերջիններիս, սակայն ինքը ծանր վիրավորվեց[9]:

Լյուբլինյան ուղղությամբ ծավալված մարտերում ավստրոհունգարական զորքն իր ողջ ռազմական կարողությամբ փոքր-ինչ նեղել էր Կրասնիկից արեւելք՝ Պոր գետի մատույցներում տեղակայված ռուսական Գրենադերական կորպուսի առանձին միավորումների: Այստեղ ծավալված մարտերի ընթացքում հատկապես աչքի ընկավ գեներալ-ֆելդմարշալ լեյտնանտ Բարկլայ դե-Տոլլիի անվան 4-րդ գրենադերական Նեսվիժսկյան գունդը, որի կազմում էր ծառայում հայազգի գնդապետ Գաբրիել Թոմայի Միրիմոնովը[10]:

Հարավարեւմտյան ճակատում ծավալված ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցում էր նաեւ 3-րդ գրենադերական Պերնովյան գունդը, որի 10-րդ ջոկատի հրամանատարն էր հայազգի կապիտան Լեւոն Գրիգորի Օսիպյանցը[11]:

Օգոստոսի 14-ին Բիսկուպե բնակավայրի մոտ տեղի ունեցած մարտերի ընթացքում 3-րդ գրենադերական գնդի 3-րդ մարտկոցը՝ նորանշանակ հրամանատար Լ. Գ. Օսիպյանցի գլխավորությամբ, աչքի ընկավ իր նպատակամղված եւ արդյունավետ գործողություններով, եւ Օսիպյանցը պարգեւատրվեց Ս.Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով հանդերձ: Օգոստոսի 16-ին Պիոտրոկով գյուղի մատույցներում ծավալված մարտերում աչքի ընկնելու համար Օսիպյանցը պարգեւատրվեց Ս.Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով՝

8 “Стратегический очерк войны 1914-1918г.”, ч.1, Москва, 1920, с.149-150.

9 Պատերազմի առաջին օրերից Լյուբլինի շրջակայքում խմբավորված ռուսական 4-րդ բանակի զորամիավորումներում առկա հայ զորականության մեջ էր նաեւ Մարկոս Տեր-Կարապետյանը: Այս ուղղությամբ ծավալված մարտերում գունդը, որում ծառայում էր Տեր-Կարապետյանը, փախուստի է մատնում ավստրիական մի քանի գումարտակի: «Մշակ», 14 հոկտեմբերի, 1914,էջ 2-3:

10 Գաբրիել Միրիմոնովը ծնվել է 1870թ. ապրիլի 25-ին: Կրթություն է ստացել Թիֆլիսի կադետական կորպուսում, Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանում: 1911թ. դեկտեմբերի 6-ից գնդապետ է: Մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը զբաղեցրել է տարբեր պաշտոններ, արժանացել է բազմաթիվ պարգեւների: Տեմ “Списокъ полковникамъ по старшинству”, С.Петербург, 1914, էջ 956:

11 Լեւոն Օսիպյանցը ծնվել է 1871թ. փետրվարի 25-ին Թիֆլիսում: Կրթություն է ստացել տեղի կադետական կորպուսում, Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանում: Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը զբաղեցրել է տարբեր պաշտոններ, արժանացել է բազմաթիվ շքանշանների: 1910թ. հունվարի 29-ից Օսիպյանցը տեղափոխվում է ռուսական 3-րդ գրենադերական Պերնովյան գունդ, որտեղ 1914թ. հունիսի 20-ին ընդունում է 10-րդ ջոկատի հրամանատարությունը եւ տեղափոխվում է ավստրիական սահմանային շրջաններ: Տեմ РГВИА, ф. 409, g. 1, գ. 155644, էջ 1-8:

սրերով հանդերձ[12]: Այս փարածքում ընթացող մարտերում ռուսական զինուժը զգալի հաջողություններ ունեցավ:

1914թ. օգոստոսի 20-ին Օլշանսկի հրվանդանում բռնկված մարտերը նույնպես կատաղի եւ էական նշանակություն ունեցող էին: Օսիպյանցի մարտկոցը աչքի ընկավ նաեւ այս մարտերում, իսկ մասնավորապես Օսիպյանցի անձնական հատկանիշների եւ մարտկոցի որակյալ ղեկավարման շնորհիվ ռուսական զինուժը այստեղ մեծ հաջողությունների հասավ: Հարավարեւմտյան ճակատի հրամանատարության 1914թ. նոյեմբերի 24-ի թիվ 29 հրամանով Օլշանսկի հրվանդանում ծավալված թեժ մարտերում մարտական կարեւոր դիրքերի պաշտպանության, թշնամու անընդհատ գրոհները եւ շպրտելու համար, անհրաժեշտ բոպեին հարեւան զորամիավորմանը օգնելու եւ դիրքերը չհանձնելու համար կապիտան Օսիպյանցը պարգեւատրվեց Գեորգիեւյան զենքով[13]:

Օգոստոսի վերջերին Վիսոկե գյուղի մոտ բռնկված մարտերը նույնպես առանձնացան իրենց ծավալով եւ թեժությամբ: Օգոստոսի 27-ին այդ գյուղի մատույցներում մարտական առաջադրանք կատարելիս թշնամու գնդակից վիրավորվեց Լեւոն Օսիպյանցը եւ էվակուացվեց մարտի դաշտից[14]:

Հարավարեւմտյան ճակատի մի շարք բնակավայրերում ողջ օգոստոս ամսվա ընթացքում ռուսական զինուժի հաջողություններն ապահովեց նաեւ ռուսական 19-րդ հրետանային բրիգադը, որի 6-րդ մարտկոցի հրամանատարն էր հայազգի փոխգնդապետ Կոնստանտին Բեգլարի Դոլուխանովը[15]:

Օգոստոսի 15-ի գիշերը լույս 16-ի առավոտյան Կ. Դոլուխանովի մարտկոցը, տեղակայված լինելով Ռուսական ճակատի հարավարեւմտյան հատվածում, Լիպիցա-Գորնա գյուղի արեւմտյան շրջանում, շարժվեց Չերդով եւ Պուկով բնակավայրերի շրջաններ: Օգոստոսի 17-ին նշված փարածքներում բռնկված արյունալի մարտերում ռուսական հետեւազորային գնդերը 19-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցի արդյունավետ գործողությունների շնորհիվ հակառակորդին զգալի կորուստներ պատճառեցին[16]:

19-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցի գործողությունները մեծ նշանակություն ունեցան նաեւ օգոստոսի 25-ից մինչեւ օգոստոսի 30-ը Գրոդեսկյան բարձունքների շրջանում ծավալված մարտերում: Վրոցով եւ Յասնելկո բարձունքների միջեւ տեղակայված մարտկոցը պաշտպանեց Մշանա գյուղի շրջանում գտնվող ստրատեգիական նշանակություն ունեցող դաշտավայրը, ինչպես նաեւ ուժեղ եւ դիպուկ կրակով մեծ կորուստներ պատճառեց Ռոտենգան գյուղ մտած թշնամուն: Հակառակորդի համար հատկապես կորստաբեր էին օգոստոսի 29-ին բռնկված մարտերը: Գիշերը, երբ թշնամին Մալչիցեի շրջանից կրակ բացեց 6-րդ մարտկոցի դիրքերի եւ Մշանա գյուղի վրա, միաժամանակ ռուսական հետախույզ-

12 Տես РГВИА, ֆ. 409, ց. 1, գ. 155644, էջ 5:

13 Տես անդ:

14 Տես РГВИА, ֆ. 409, ց. 1, գ. 155644, էջ 8:

15 Կոնստանտին Դոլուխանովը ծնվել է 1871թ. հոկտեմբերի 24-ին: Կրթություն է ստացել Թիֆլիսի կադետական կորպուսում, 2-րդ Կոնստանտինովյան ռազմական ուսումնարանում: Զինվորական ծառայության է անցել 1890թ. օգոստոսի 29-ից, 1912թ. հունվարի 19-ից փոխգնդապետ է: Մինչեւ աշխարհամարտի սկիզբը զբաղեցրել է տարբեր պաշտոններ, արժանացել է մի շարք շքանշանների եւ պարգեւների: Տես "Списокь подполковникамь по старшинству", էջ 1661:

16 Տես РГВИА, ֆ. 3695, ց. 1, գ. 18, էջ 69-70:

ներին մատնեց իրենց թողարկված դիրքերի կոորդինատները: Գլխավոր հրամանատարության ցուցումների եւ փոխգնդապետ Կ. Բ. Դոլուխանովի հրամանատարական բարձր հատկանիշների շնորհիվ, 6-րդ մարտկոցն իր նպատակային կրակահերթով 00 ժամ 37 րոպեին մեկընդմիշտ լռեցրեց հակառակորդին[17]:

Մինչեւ օգոստոսի վերջը Մշանա եւ Մալչիցն գյուղերի տարածքներում ռուսական զորքը լիակատար հաղթանակներ տոնեց՝ թշնամուն զգալի կորուստներ պատճառելով: Նշված հաջողությունները, անշուշտ, պայմանավորված էին նաեւ 19-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցի հրամանատարի՝ փոխգնդապետ Դոլուխանովի բարձր որակական հատկանիշներով եւ ռազմական հարուստ գիտելիքներով: Դոլուխանովի մարտկոցի իրականացրած այս գործողությունները մեկ անգամ եւս ապացուցեցին ռազմագետ Դմիտրեւսկու այն տեսակետը[18], որի համաձայն հրետանին պատերազմի ժամանակ գործում է ո՛չ միայն հետեւակին օգնելու նպատակով:

Ռուսական 4-րդ բանակի մղած մարտերին զուգահեռ՝ ռուսական 5-րդ բանակը նույնպես թեժ մարտեր մղեց ավստրոհունգարական 4-րդ բանակի դեմ, որոնք կոչվեցին Թոմաշեւյան մարտեր կամ Կոմարովյան ճակատամարտ: Այս մարտերում նույնպես աչքի ընկան մի շարք հայազգի սպաներ:

Պատերազմի ազդարարումից անմիջապես հետո, ռուսական 3-րդ գրենադերական հրետանային բրիգադը ժամանեց Խոլմ քաղաք եւ հաշվառվեց գործող բանակի կազմում: Բրիգադի 2-րդ դիվիզիոնի հրամանատարն էր հայազգի գնդապետ Գեորգի Ավետիքի Պոզոեւը[19]: Պոզոեւը, իր զորամիավորման գլուխ անցած, միանգամից ներքաշվեց պատերազմական թոհուբոհի մեջ: Նրա ղեկավարած 2-րդ դիվիզիոնը օգոստոսի 13-ին եւ 14-ին եռանդուն եւ ճշգրիտ գործողություններով Զամիտե քաղաքի մատույցներում ընթացող կատաղի մարտերում ապահովեց ռուսական զորքի հաջողությունները: Անձամբ մասնակցելով մարտերին՝ Պոզոեւը ցուցաբերեց առանձնահատուկ քաջություն, ինչպես նաեւ իր գործողությունների եւ հմտությունների շնորհիվ առավել բարձրացրեց զինվորականների մարտական ոգին:

Օգոստոսի 14-ին Զամիտեի շրջանից մարտերը տեղափոխվեցին Զամոստյա եւ ստացան ավելի սուր բնույթ: Գնդապետ Պոզոեւի դիվիզիոնը այստեղ նույնպես իր դիպուկ կրակի շնորհիվ առավելագույնս նպաստեց ռուսական հետեւազորի հաջողություններին: Այս մարտերում Պոզոեւը վիրավորվեց եւ հոսպիտալացվեց[20]: Ապաքինվելուց անմիջապես հետո նրան առաջարկվեց ծառայության անցնել թիկունքում՝ առողջական վիճակի հետագա բարդություններից խուսափելու համար, սակայն հրամանատարության այդ բարյացակամ առաջարկը հայազգի գնդապետը մերժեց: Նա վերադարձավ Ռուսական ռազմաճակատ եւ կրկին ամբողջությամբ խորասուզվեց պատերազմական առօրյայի մեջ:

17 Տե՛ս РГВИА, ф. 3695, g. 1, q. 18, էջ 137:

18 Տե՛ս **А. Дмитревскій**, О назначеніи артилеріи, "Военный сборникъ", թ. 9, 1914 թ., էջ 77:

19 Գեորգի Պոզոեւը ծնվել է 1858թ. հոկտեմբերի 20-ին Ախլցխայում, զինվորականի ընտանիքում: Կրթություն է ստացել Մոսկովյան 2-րդ ռազմական գիմնազիայում, 3-րդ Ալեքսանդրովյան զինվորական ուսումնարանում, սպայական հրետանային դպրոցում: 1876թ. օգոստոսի 16-ից զինվորական ծառայության մեջ էր, 1910թ. օգոստոսի 1-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում: Մինչեւ համաշխարհային պատերազմի սկիզբը զբաղեցրել է տարբեր պաշտոններ, արժանացել է բազմաթիվ պարգեւների: Տե՛ս РГВИА, ф. 409, g. 1, q. 173103, էջ 21-24, 26:

20 Տե՛ս РГВИА, ф. 409, g. 1, q. 173103, էջ 26:

Ռուսական ռազմաճակատի արեւելյան մասում ավստրոհունգարական ուժերը ծանր իրավիճակի մեջ էին: Ռուսական 3-րդ եւ 8-րդ բանակները, ներխուժելով Գալիցիա, հաղթական ռազմարշավ էին իրականացրել: Զգալով վտանգը՝ ավստրոհունգարական ուժերը զգալի կորուստներ տալով նահանջեցին: Լյուբլին-խոլմյան գործողությունն ավարտվեց, որի գլխավոր իրադարձություններն էին Կրասնիկի եւ Թոմաշեւյան շրջանի մարտերը: Հակառակորդը չկարողացավ իրականացնել ռուսական 5-րդ բանակի շրջապատումը, իսկ Կրասնիկի շրջանի ճակատամարտում թշնամու տված կորուստները չարդարացրեցին իրենց նպատակները: Ռուսական 5-րդ բանակի վրա սպառվեցին ավստրոհունգարական ուժերի ողջ ռազմական կարողությունները: Ավստրոհունգարական հրամանատարության ծրագրերը ձախողվեցին նաեւ ռուսական բանակում քաջ եւ արի, որակական բարձր հատկանիշներ ունեցող զինվորականության շնորհիվ:

Այդուհանդերձ, ռուսական զորքը կարիք ուներ էլ ավելի ուժեղ եւ ամուր հրամանատարական կազմի, որովհետեւ եղան դեպքեր, երբ ռուսական զորամիավորումների հրամանատարների ոչ փոխկապակցված գործունեության պատճառով թույլ տրվեցին կոպիտ սխալներ: Օրինակ՝ ռուսական 21-րդ բանակային կորպուսը հյուսիսարեւմտյան ուղղությամբ շարժելու Գլխավոր հրամանատարության հրամանը Ռուզսկին կատարեց ուշացումով, որի կապակցությամբ պատմաբաններից մեկը իրավացիորեն նկատել է. «Եթե Ռուզսկին այդ զորաշարժը իրականացներ ավելի վաղ, ասենք 2 օր շուտ, եւ չկապվեր լվովյան ուղղության վրա, ապա 5-րդ բանակը չէր նահանջի, եւ Լյուբլին-խոլմյան օպերացիան այլ շրջադարձ կունենար»[21]:

Այն ժամանակ, երբ Հարավարեւմտյան ճակատի աջ թեւի բանակներն իրականացնում էին Լյուբլին-խոլմյան ռազմական գործողությունը, ճակատի հարավային թեւում ռուսական 3-րդ եւ 8-րդ բանակներն իրականացնում էին Գալիչ-լվովյան ռազմական գործողությունը, որի ընթացքում բազմաթիվ հայազգի զինվորականներ աչքի ընկան իրենց քաջագործություններով:

Ռուսական 3-րդ բանակի հարձակումը սկսվեց օգոստոսի 6 (19)-ին, եւ 6 օրում բանակը առաջ շարժվեց 90-100 կմ (Կամենկի-Ստրումիլով եւ ավելի հարավ՝ Զոլոտայա Լիպայով): 3-րդ բանկի ձախ թեւը ամուր փոխկապակցված լինելով 8-րդ բանակի հետ, ձգտում էր ուժեղ ճակատային հարված հասցնել լվովյան ուղղությամբ եւ ավելի հարավ: 8-րդ ռուսական բանակը իր հարձակումը սկսել էր դեռեւս օգոստոսի 5 (18)-ին եւ նույնպես առաջ էր շարժվում հաղթանակներով: Պարզ էր դարձել, որ այստեղ ավստրոհունգարական զորքին սպասվում էր մեծ աղետ, որի պատճառով սկսվեցին 2-րդ եւ 3-րդ ավստրոհունգարական բանակների տեխնիկայով եւ կենդանի զինուժով համալրման գործողություններ:

Օգոստոսի 13 (26)-ից 15 (28)-ը Զոլոտայա Լիպա գետի շրջանում տեղի ունեցան դիմահար ճակատամարտեր ավստրոհունգարական 3-րդ եւ ռուսական 3-րդ բանակների միջեւ, որտեղ 60 կմ ձգված հատվածում՝ Կամենկի-Ստրումիլովից մինչեւ Դունայով, թշնամին ջախջախվեց:

Օգոստոսի 16 (29)-ին ռուսական 3-րդ բանակը շարունակեց իր հարձակումը Լվովի

21 **А. Коленковский**, Маневренный период первой мировой империалистической войны 1914 ., Москва, 1940, с.238.

ուղղությամբ, իսկ ռուսական 8-րդ բանակը, թողնելով իր 24-րդ բանակային կորպուսը Գալիչի մոտ, մնացած ուժերով օգոստոսի 15 (28)-ի լուսաբացին նույնպես ուղղություն վերցրեց դեպի Լվով: Լվովի ուղղությամբ իրականացվող հարձակման ընթացքում 8-րդ բանակի կազմում գտնվող հազարավոր հայ զինվորականներից առանձնացավ 52-րդ հետեւակային գնդի[22] հրամանատարի օգնական, կապիտան Բոգդան Բաղդասարյանը[23]:

Օգոստոսի 15-ին Բաղդասարյանը զորքի հետ գտնվում էր Գնիլայա-Լիպա գետի շրջանում՝ ավստրիական հողի վրա: Այն ժամանակ, երբ զորքը պատրաստվում էր ճաշելու, գնդի հրամանատարը մի սպայի միջոցով կապիտան Բաղդասարյանին տեղեկացնում է, որ շրջապատված են թշնամու կողմից: Կապիտանի հրամանով զորքը անմիջապես դիմում է զենքի եւ դիրքավորվում է մոտակա բլրի վրա:

Հեռադիտակով զննելով շրջակայքը՝ Բաղդասարյանը կարողանում է նկատել շուրջ 400 հոգուց բաղկացած հակառակորդին: Վերջինս իր հերթին էր նկատել Բաղդասարյանի ենթակայության տակ եղած 300 հոգուց բաղկացած զորաջոկատը: Կողմերի միմյանց գննելու գործողությունները շուտով վերաճեցին ակտիվ փոխհրաձգության: Ռուսներից վիրավորվեց 9 զինվոր, որոնցից 3-ը ավելի ուշ մահացան, իսկ թշնամու զոհերի եւ վիրավորների մասին ոչինչ հայտնի չէր: Այս շիկացած կռվում Բաղդասարյանի զորահումբն իր վճռական գործողություններով մեծ առավելություն ձեռք բերեց, որ հետզհետե դարձավ հաղթանակ:

Մեկ եւ կես ժամ տեւած հրաձգությունից հետո, հակառակորդը սպիտակ դրոշակ բարձրացրեց եւ հանձնվելու նշան ցույց տվեց: Ռուս զինվորականներն իրենց հրամանատարների կարգադրության համաձայն դադարեցրեցին կրակը եւ սկսեցին զբաղվել իրենց զոհված եւ վիրավոր ընկերներին դաշտային վիրակապարան տեղափոխելու գործով: Սակայն շատ շուտով կապիտան Բաղդասարյանը նկատեց, որ իր զինվորները թշնամու անակնկալ արձակած գնդակներից սկսում են ընկնել եւ կրկին կրակ արձակելու հրաման տվեց: Վերսկսված հրաձգության ընթացքում, երբ Բաղդասարյանի աջ կողմում արիաբար կռվող Մովսես Ոսկանյանը վիրավորվեց, կապիտանը վերցրեց վերջինիս հրացանը եւ հենց առաջին կրակոցով վայր գցեց հակառակորդի հրամանատարին: Բաղդասարյանի հրամանով զորքն իր տեղատարափ կրակով սկսեց նահանջող թշնամու շարքերը նոսրացնել: Թշնամու փրկված զինվորների խմբերը պատսպարվեցին 10 վերստ հեռու գտնվող անտառում: Գերի վերցվեցին 10-ից ավելի թշնամական զինվորներ, այդ թվում՝ մի քանի վիրավորներ:

Օգոստոսի 16-ի առավոտյան գնդի հրամանատարը, կապիտան Բաղդասարյանի շնորհիվ ձեռք բերված հաղթանակից գոհ՝ գրկախառնվեց վերջինիս: Պարզվեց, հակառակորդը այս կռվում տվել էր 65 զոհ, 40 վիրավոր եւ 10-ից ավելի գերի: Մարտին մասնակցած զինվորները միաձայն վկայում էին, որ կապիտան Բաղդասարյանի արձակած գնդակներից ընկել են 4 սպա, 8 առաջնակարգ հրաձիգ ունտեր-օֆիցեր եւ մի քանի շարքային զինվոր:

---

22 «Մշակ» թերթի 1914թ. 209 համարում, Կյուրեղ ս. Աբգարյանի հոդվածում, Բաղդասարյանի մասին նշվում է, որ նա Թեոդոսիա քաղաքի զորագնդի հրամանատարի օգնականն էր: Կ. Ա. Ջալեսկու հիշյալ աշխատության 489-րդ էջում նշված է, որ Թեոդոսիա քաղաքում տեղակայված էր Մեծ իշխան Կիրիլ Վլադիմիրովիչի անվան 52-րդ Վիլենյան հետեւակային գունդը:

23 Բոգդան Բաղդասարյանը բնիկ Վլադիկավկազ քաղաքից էր: Կրթություն է ստացել տեղական գիմնազիայում, ապա զինվորական դպրոցում: 27 տարի էր, որ գտնվում է զինվորական ծառայության մեջ: Ապրել է Թեոդոսիա քաղաքում, կապիտանի զինվորական կոչումով նա տեղական զորագնդի հրամանատարի օգնականն էր: Օգոստոսի 7-ից սկսած մասնակցել է մի շարք կռիվների:

Այդ կռվում ռուսական զորքում նույնպես 30-ից ավելի կորուստներ եղան, որոնց անունները կարդալու ժամանակ Բոգդան Բաղդասարյանը չի կարողացել զսպել արտասուքը:

Օգոստոսի 16-ի գիշերը զունդը միանում է բանակին, որովհետև ռուսական հրամանատարությունը մշակել էր մեծ ճակատամարտի ծրագիր:

Օգոստոսի 17-ին՝ ժամը 11-ի սահմաններում ռուսական շուրջ 100 հազարանոց բանակը մարտի բռնվեց գրեթե նույն քանակության ավստրիական զինուժի հետ:

Ռոգատինի, Գնիլայա-Լիպա գետի շրջանում ռուսական 8-րդ բանակը ավստրոհունգարական 2-րդ բանակի նկատմամբ եռօրյա մարտերից հետո լիակատար հաղթանակ տոնեց: Այդ մարտերի ընթացքում՝ օգոստոսի 18-ին, կապիտան Բաղդասարյանի զորախումբը գրավեց Լվովի ամրություններից մեկը, որտեղ մեծ քանակությամբ սննդամթերք և ռազմամթերք կար: Հաջորդ օրը Գնիլայա-Լիպա գետի վրա տեղի ունեցած կռվում վիրավորվեց նաև Բաղդասարյանը և հոսպիտալացվեց[24]:

Կապիտան Բաղդասարյանը, հանդիսանալով ստրատեգիական աշխատանքներում, զորքի կառավարման գործում գնդի հրամանատարի գործուն օգնականը, միևնույն ժամանակ հայտնի նշանառու-հրաձիգ էր, որի համար արժանացել էր բազմաթիվ գովասանագրերի և պարգևների:

1914թ. օգոստոս ամսին ընթացքում ուշադրության արժանի էին նաև ռուսական 8-րդ բանակի 7-րդ բանակային կորպուսի գործաշարժերն ու արդյունավետ մարտերը, որոնք հմտորեն ղեկավարվում էին գեներալ-մայոր Վլադիմիր Լազարեւի կողմից: 1914թ. հունիսի 3-ից ստանձնելով 7-րդ բանակային կորպուսի շտաբի պետի[25] պատասխանատու հրամանատարական պաշտոնը՝ նա կարողացավ կորպուսի գործողություններն արագորեն հարմարեցնել ստեղծված իրավիճակներին:

Օգոստոսի կեսերին Ռոգատինի և Գնիլայա-Լիպա գետի տարածքում ռուսական զինուժի կազմում իր զորամիավորումով մարտական առաջադրանք էր կատարում Թերեքի կազակական դիվիզիայի հրամանատար հայազգի գեներալ Տիգրան Դանիելի Արյուտինովը (Հարությունյան)[26]:

Օգոստոսի 16 (29)-ին նրա զորամիավորումը մարտի բռնվեց ավստրոհունգարական 2-րդ բանակի զորամասերի հետ: Թշնամին իր նպաստավոր դիրքի շնորհիվ կարողացել էր Ռուդի շրջանում ճեղքել ռուսական դիրքերը, սակայն Թերեքի կազակական դիվիզիայի զորամասերի շնորհիվ փակվեց Ռուդի շրջանում առաջացած ճեղքը[27]:

Ընդհանուր առմամբ՝ Բրուսիլովի բանակի զորամիավորումները ռոգատինյան մարտե-

---

24 Երբ Բաղդասարյանը դուրս է գալիս ջրից՝ նկատում է, որ վիրավորվել է եւ քանի որ գտնվելիս է եղել սառը ջրի մեջ, ժամանակին չի զգացել, որ վիրավորվել է, այդ պատճառով արյունաքամ եղած՝ նա ուշագնաց է լինում: Գնդակը ձախ ձեռքի թաթից մտնելով դուրս է եկել ուսից եւ կտրել է թեւի մկանները: Օգոստոսի 27-ին նա ժամանում է Թեոդոսիա:

25 Տե՛ս "Списокъ Генераламъ по старшинству", Петроград, 1916, էջ 106:

26 Տիգրան Դանիելի Արյուտինովը ծնվել է 1858թ. հունիսի 1-ին ազնվականի ընտանիքում: Կրթություն է ստացել Մոսկովյան 1-ին ռազմական գիմնազիայում, 3-րդ Ալեքսանդրովյան ռազմական ուսումնարանում եւ հեծելազորային սպայական դպրոցում: 1912-ից գեներալ-մայոր է: Պատերազմի սկսվելուն պես, երբ Թերեքյան զորքերը վերակազմավորվեցին դիվիզիայի, վերջինիս հրամանատար նշանակվեց Արյուտինովը: Տե՛ս "Списокъ Генераламъ по старшинству", 1913, էջ 853:

27 Տե՛ս **К. А. Залесский**, Первая мировая война, "Биографический Энциклопедический словарь, Правители и Военачальники", Москва, 2000, էջ 79:

ի ընթացքում գերի վերցրեցին հակառակորդի 20000 զինվոր եւ տիրացան 70 հրանոթի[28]: Ջախջախված թշնամին, թողնելով զենքը, փախավ Լվովի, Միկոլաեւի եւ Գալիչի ուղղությամբ: Այժմ ռուսական 8-րդ բանակի մոտակա խնդիրն էր ռուսական 3-րդ բանակի հետ Լվովի գրավումը: 8-րդ բանակի մղած մարտերին զուգահեռ՝ 3-րդ բանակը գրավել էր Ժոլկիեւը եւ լուրջ վտանգ էր ստեղծել թշնամու բանակի ձախ թեւի համար: Այսպիսի պայմաններում ավստրոհունգարական հրամանատարությունը հասկացավ, որ Լվովը այլեւս հնարավոր չէր պահել, հակառակ դեպքում ավստրոհունգարական 3-րդ բանակը ամբողջովին կջախջախվեր: Օգոստոսի 21 (սեպտեմբերի 3)-ին ռուսական 8-րդ բանակը մտավ Լվով: «Այսօր, օգոստոսի 21-ին՝ առավոտյան ժամը 11-ին,- հաղորդում էր Բրուսիլովը,- 12-րդ հեծելազորային դիվիզիայի միավորումները մտան թշնամու կողմից լքված Լվով՝ ժողովրդի կողմից բարյացակամ ընդունվելով»[29]:

Լվով մուտք գործած 12-րդ հեծելազորային դիվիզիայի կազմում էր նաեւ 12-րդ դրագունյան Ստարոդուբյան գունդը, որի հրամանատարն էր հայազգի գնդապետ Պավել Գրիգորի Խաչատուրովը[30]:

Օգոստոսի 22 (սեպտեմբերի 4)-ին ռուսները գրավեցին Գալիչը, իսկ օգոստոսի 24 (սեպտեմբերի 6)-ին Միկոլաեւը: Գալիչ-լվովյան օպերացիան ավարտվեց, որի ընթացքում ռուսական 3-րդ եւ 8-րդ բանակները պարտության մատնեցին ավստրոհունգարական 3-րդ եւ 2-րդ բանակներին: Հակառակորդը նահանջեց դեպի արեւմուտք:

Ինչպես հայտնի է Արեւելապրուսական ռազմական գործողության իրականացման ընթացքում գերմանական հրամանատարությունը որոշել էր հարձակվել Հարավարեւմտյան ճակատի վրա՝ դաշնակից ավստրոհունգարական զինուժին օգնելու համար: Թշնամու այդ որոշմանը դիմակայելու նպատակով ռուսական Գլխավոր հրամանատարությունը նույնպես միջոցներ ձեռնարկեց. ճակատի աջ թեւում Լեչիցկու գլխավորությամբ կազմավորվեց 9-րդ ռուսական բանակը: Այս բանակի նպատակներից մեկն էր գերմանացիների հավանական հարձակմանը դիմակայելը: Օգոստոսի 21 (սեպտեմբերի 3)-ին Իվանովը զորքի առջեւ խնդիր դրեց. հարձակվել թշնամու վրա, պարտության մատնել նրան եւ ետ շպրտել դեպի Վիսլա[31]:

Ավստրոհունգարական հրամանատարությունը, չստանալով գերմանացիների խոստացած օգնությունը՝ օպերացիայի ողջ ծանրությունը տեղափոխեց դեպի հարավ: Հարավում՝ Լվովի արեւմուտքում, ավստրիացիները պետք է պարտության մատնեին ռուսական 8-րդ եւ 3-րդ բանակներին, որպեսզի կարողանային ռուսներից ազատագրել ողջ արեւելյան Գալիցիան: Սակայն ավստրոհունգարական հրամանատարության ծրագրերը չէին համա-

28 Տե՛ս անդ :

29 РГВИА, ф. 2067, g. 1, գ. 297, էջ 262:

30 Պավել Գրիգորի Խաչատուրովը ծնվել է 1860թ. դեկտեմբերի 21-ին: Կրթություն է ստացել Ելիզավետպոլի պրոգիմնազիայում, Ելիզավետգրադի հեծելազորային յունկերական ուսումնարանում: 1879թ. հոկտեմբերի 26-ից զինվորական ծառայության մեջ էր, իսկ 1910թ. մայիսի 19-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում: Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Ռուսաստանի զինված ուժերում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, արժանացել է մի շարք շքանշանների եւ պարգեւների: Տե՛ս "Списокъ Полковникамъ по старшинству",1914, էջ 609:

31 Տե՛ս "Восточно-Прусская операция". Сборник документов мировой империалистической войны на русском фронте (1914-1917г.), Москва, 1939, էջ 184:

պատասխանում ստեղծված իրավիճակին եւ ի սկզբանե դատապարտված էին անհաջողության:

Օգոստոսի 22 (սեպտեմբերի 4)-ից ռուսական 9-րդ եւ 4-րդ բանակների միավորումները հարձակվեցին Վիսլա եւ Պոր գետերի միջեւ գտնվող ամրացված թշնամական դիրքերի վրա: Այս հարձակման ժամանակ 9-րդ բանակին աջակցելու էր նաեւ ռուսական 14-րդ բանակային կորպուսը, որի հրետանու տեսուչ գեներալ-լեյտենանտ Արտեմի Սողոմոնի Վարտանովը Կրասնիկ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո՝ օգոստոսի 13-ից օգոստոսի-27-ը իր հրետանային մարտկոցներով թեժ եւ արյունալի մարտեր մղեց Լյուբլին քաղաքի հարավարեւմտյան մասում գտնվող Բելժիցեի բնակավայրի շրջանում՝ ապահովելով ռուսական զորքերի հաղթանակներն ու անկորուստ տեղաշարժերը[32]:

Ռուսական 5-րդ բանակն իր 25-րդ եւ 19-րդ բանակային կորպուսներով նույնպես թեժ մարտեր էր մղում: Համագործակցելով ռուսական 4-րդ բանակի ձախ թեւի հետ՝ ձգտում էր գրավել ավստրոհունգարական խմբավորման թեւը արեւելքից:

Ռուսական 5-րդ, 17-րդ, 21-րդ բանակային կորպուսների կազմում գտնվող հազարավոր հայ զինվորների ցուցաբերած քաջագործությունների շնորհիվ էր նաեւ, որ Ռավա-Ռուսկայա բնակավայրի շրջանում, Գորոդոկյան դիրքերում ռուսական 3-րդ եւ 8-րդ բանակները հաղթանակներ տոնեցին:

Այս ընթացքում բռնկված մարտական գործողությունների ժամանակ հայ զորականությունն ունեցավ նաեւ բազմաթիվ կորուստներ, իսկ գնդապետ Միքայել Հովսեփի Յուզբաշյանի մահը[33] ցնցեց նրան ճանաչողներին: Յուզբաշյանը այն սակավ զինվորականներից էր, որոնք լինելով ոչ ռուս ազգության ներկայացուցիչ՝ մեծ համբավ էին վայելում թե? սպայության եւ թե? հասարակ զինվորների շրջանում:

Գալիցյան իրադարձությունները Առաջին համաշխարհային պատերազմի խոշոր ռազմական գործողություններից էին: Մոտ 400 կմ տարածքի վրա մեկ ամսից ավելի ծավալված թեժ մարտերի ընթացքում ավստրոհունգարացիները ունեցան շուրջ 400 հազար զինվորի կորուստ՝ ներառյալ 100 հազար գերիներ: Թշնամին այստեղ կորցրեց նաեւ 400 հրանոթ: Ռուսական կողմի կորուստները կազմում էին 230 հազար մարդ[34]:

Գալիցյան ռազմական գործողությունները մեծ նշանակություն ունեցան նաեւ անգլոֆրանսիական զորքերի համար: Եւրոպայի արեւմուտքում Մարնայի ճակատամարտի ելքը եւ գերմանացիների պարտության հիմնական պատճառը նաեւ այն էր, որ գերմանացիները օգոստոսի վերջերին ֆրանսիական ճակատից մի քանի գերմանական կորպուս արագորեն տեղափոխեցին Արեւելյան ռազմաճակատ[35]:

---

32 Տես РГВИА, ф. 409, g. 1, գ. 175249, էջ 21:

33 Միխայիլ Յուզբաշեանը ծնվել է 1868թ. սեպտեմբերի 18-ին: Կրթություն է ստացել Կիեւի հետեւակային յունկերական պրոգիմնազիայում, Գլխավոր շտաբի ակադեմիայում եւ այլն: 1886թ. սեպտեմբերի 4-ից զինվորական ծառայության մեջ է, պատերազմին մասնակցեց որպես գնդապետ: Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Ռուսաստանի զինված ուժերում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, կատարել է գաղտնի առաջադրանքներ, արժանացել բազմաթիվ պարգեւների: Միքայել Յուզբաշյանի մարմինը գտնելու համար Ավստրիա է մեկնում նրա եղբայրը՝ գնդապետ Պ. Հ. Յուզբաշյանը: Տես "Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1912, էջ 606. «Մշակ», 2 հոկտեմբերի, 1914:

34 Տես **А. Коленковский**, Маневренный период первой мировой империалистической войны 1914 ., էջ 263-264:

35 Տես РГВИА, ф. 2000, g. 2, գ. 2167, էջ 193:

Ալեքսեեւը Ն. Ն. Յանուշկեւիչի հետ 1914թ. սեպտեմբերի 16 (29)-ին խոսելիս նշեց, որ դաշնակիցները չեն կարող ռուսների դեմ որեւէ ասելու բան ունենալ, քանի որ «ավստրիացիների պարտությունը էապես փոխեց գործի դրությունը, շեղեց արեւելք եւ? ուժերը, եւ? Վիլհելմի ուշադրությունը»[36]:

«...Մարնայի եւ Գալիցիայի իրադարձությունները,- գրում էր Ֆալկենգայնը,-անորոշ ժամանակով հետաձգեցին պատերազմի ելքը: Մինչեւ այժմ գերմանացիների պատերազմ վարելու հիմնական միջոցը՝ արագ որոշումների շնորհիվ հաջողությունների հասնելու սկզբունքը, հավասարվեց զրոյի»[37]:

Գալիցյան ռազմական գործողություններում ռուսական զենքի հաղթանակի մի մասնիկն էլ, անշուշտ, պատկանում է Հարավարեւմտյան ճակատում գործող հայ զորայիններին:

Գալիցյան ռազմական գործողություններին մասնակցող հայ ազգի զավակները մարտական գործողությունների բոլոր հատվածներում իրենց դրսեւորեցին որպես նվիրված հայրենասերներ, ինչպես նաեւ այդ գործողության ընթացքում ձեռք բերեցին թշնամուն ավելի ուժեղ հարվածելու փորձ ու հմտություն:

36 "Варшавско-Ивангородская операция, Сборник документов мировой империалистической войны на русском фронте /1914-1917г/", Москва, 1938, с.38.

37 **Э.Фон Фалькенгайн**, Верховное командование 1914-1916г. в его важнейших решениях, Москва, 1923, с.31.